ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 25
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 25

ՈՐՈՇՈՒՄ N 01/2026-Դ/Վ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 23 հունվարի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի, ուսումնասիրելով 2026 թվականի հունվարի 15-ին Սեմյոն Բաբայանի կողմից Հանձնաժողով ներկայացված դիմումը (այսուհետ՝ նաև Դիմում) և դրա հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքները.

ՊԱՐԶԵՑ

1. 2026 թվականի հունվարի 15-ին Հանձնաժողով է մուտքագրվել ՀՀ քաղաքացի Սեմյոն Բաբայանի՝ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով ուղարկված «ՀԱՐՑՈՒՄ» վերտառությամբ դիմումը (այսուհետ՝ Դիմում), որով վերջինս Դիմումին կից ներկայացրել է «https://www.facebook.com/share/1K5CZue4kn/» հղումը և հայտնել հետևյալը՝

«Վերլուծելեք իրա ասածը՝ կաշառք տալ կաշառք չվերցնողիմ կաշառք չվերցնելու համար կաշառելով չկաշառվելը

ՈՒՆԻԿՈՒՄ

ԸՆԴՈՒՆԵՔ ՎԱՐՈՒՅԹ»:

2. Սույն որոշման համար էական նշանակություն ունեցող փաստական և իրավական հիմքերն ու հիմնավորումները.

2.1 «https://www.facebook.com/share/1K5CZue4kn/» հղմամբ տեղադրված տեսանյութի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն վերաբերում է 2017 թվականին «Ելք» կուսակցությունների դաշինքի ցուցակով Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ին կայանալիք ընտրություններին մասնակցող և ցուցակը ղեկավարող Նիկոլ Վովայի Փաշինյանին:

2.2 Նիկոլ Վովայի Փաշինյանը նախքան Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցելը՝ 2017թ. ապրիլի 2-ին ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր «Ելք» կուսակցությունների դաշինքի թիվ 4 ընտրատարածքի տարածքային ընտրական ցուցակով:

2.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքն ընդունվել է 2017 թվականի հունիսի 9-ին և ուժի մեջ է մտել 2019 թվականի նոյեմբերի 20-ին:

2.4 «Հանրային ծառայության մասին» թիվ ՀՕ-206-Ն օրենքը ընդունվել է 2018 թվականի մարտի 23-ի:

2.5 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձևավորվել է 2019 թվականի նոյեմբերի 19-ին:

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու **միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով**:

Հանձնաժողովի գործառույթներն ու լիազորություններն ամրագրող «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ի թիվս այլնի, **քննում և լուծում է** պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև

պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: (…)

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **վարույթ կարող է հարուցվել՝ յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա,** իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: (…)

Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովը քննության է առնում սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դիմումը, եթե այն ներկայացվել է խախտման կատարման պահից մեկ տարվա ընթացքում:

Օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները, որի հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դիմումը պետք է պարունակի՝

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ դրա լրիվ անվանումը, հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը).

2) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների առերևույթ խախտում թույլ տված պետական պաշտոն զբաղեցնող անձի կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի պաշտոն զբաղեցնող անձի կամ վարքագծի կանոնի առերևույթ խախտում թույլ տված կամ շահերի բախման վիճակում առերևույթ հայտնված պետական պաշտոն զբաղեցնող անձի (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի) կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի՝ պաշտոն զբաղեցնող անձի անունը, ազգանունը, որին վերաբերում է դիմումը, նրա զբաղեցրած պաշտոնը, և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որտեղ անձը պաշտոն է զբաղեցնում (…)

3) խախտումը կամ շահերի բախման դեպքը.

4) փաստական հանգամանքները, որոնցով ողջամտորեն հիմնավորվում է առերևույթ խախտումը կամ դեպքը, առկայության դեպքում՝ այդ հանգամանքների հիմնավորվածությունը հավաստող ապացույցները (փաստաթղթեր, նյութեր).

5) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկան).

(…)

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝**

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.

(…)

Դիմումի և դրան կից ներկայացված տեսանյութի ուսումնասիրության, ինչպես նաև կիրառելի իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումով ներկայացված չեն Հանձնաժողովի քննությանը ենթակա

առերևույթ իրավախախտման դեպք կամ Հանձնաժողովի քննությանը ենթակա առերևույթ խախտման փաստական հանգամանքներ: Նախ, Դիմումում վկայակոչվող իրադարձությունը վերաբերում է 2017 թվականին տեղի ունեցած գործողությանը, մինչդեռ պաշտոնատար անձի կողմից որոշակի վարքագիծ դրսևորելու համար պատասխանատվություն նախատեսող իրավական նորմը՝ «Հանրային ծառայության մասին» օրենքը ուժի մեջ է մտել միայն 2018 թվականի ապրիլի 9-ին: Հարկ է նշել, որ Հանձնաժողովը, որի լիազորությունների շրջանակում ներկայացվել է դիմումը, ձևավորվել է միայն 2019 թվականին, իսկ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2019 թվականի նոյեմբերի 20-ին: Այսինքն՝ քննարկվող գործողության կատարման պահին Հանձնաժողովը գոյություն չի ունեցել և, ըստ այդմ, Հանձնաժողովը չունի իրավասություն՝ այդ ժամանակահատվածին վերաբերող գործողությունների նկատմամբ իրավական գնահատական տալու մասով:

Երկրորդ, դիմումի բովանդակային ուսումնասիրությունից նույնպես չի բացահայտվում իրավախախտման փաստական կազմի առկայությունը: Դիմումում ներկայացված փաստերը չեն հաստատում այնպիսի գործողություն, որը կարող էր վերաբերելի համարվել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման դեպքերի:

Ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով թե՛ իրավախախտում նախատեսող նորմի ընդունման ժամանակը, թե՛ Հանձնաժողովի ձևավորման ժամանակահատվածը, ինչպես նաև Դիմումում ներկայացված փաստերի իրավական անհիմն լինելը, Հանձնաժողովը փաստում է, որ տվյալ դեպքում առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր, հետևապես Դիմումը ենթակա է մերժման՝ իրավական հիմքերի բացակայության պատճառով:

Համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալ իրավական կարգավորումները պարզ է դառնում, որ Հանձնաժողովը իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնք մտնում են վերջինիս լիազորությունների մեջ: Մասնավորապես, Օրենքով սահմանվել է, որ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման վերաբերյալ դիմումները կարող են քննության առարկա դառնալ Հանձնաժողովի կողմից միայն այն դեպքում, երբ ներկայացվել են ենթադրյալ իրավախախտումը կատարելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Սույն գործով Հանձնաժողովը իրավասու չէ քննության առնել Դիմումը՝ նաև պայմանավորված այն հանգամանքով, որ Դիմումով ներկայացված տեսանյութը վերաբերում է 2017 թվականին տեղի ունեցած իրադարձություններին, ինչը ինքնին անհնար է դարձնում Դիմումի քննությունը՝ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետը անցած լինելու հիմքով:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմումը նաև չի համապատասխանում Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին, քանի որ չի պարունակում որևէ տվյալ պաշտոնատար անձի անվան, ազգանվան վերաբերյալ, անձի զբաղեցրած հստակ պաշտոնի վերաբերյալ և միայն տրամադրված հղման, ինչպես նաև՝ լրացուցիչ ուսումնասիրությունների միջոցով է հնարավոր եղել պարզել հիշյալ անհրաժեշտ տվյալները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմումի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ Դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից, ուստիև Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումի հիման վրա վարույթի հարուցումը ենթակա է մերժման:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածով և 30-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քաղաքացի Սեմյոն Բաբայանի կողմից 2026 թվականի հունվարի 15-ին ներկայացված «ՀԱՐՑՈՒՄ» վերտառությամբ դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել ՀՀ քաղաքացի Սեմյոն Բաբայանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ